

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ՈՒ ՈՈՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀՅՈՒՄՆԱԿԱՆ ԿՍՏՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ ԸԱՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՆԵՐԻ

ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՅԱՆ

Ուրմիա լճի ավազանի (Հյուսիսարևմտյան Իրան)՝ մ.թ.ա. IX – VII դդ. անասնաբուծական մասին տեղեկություններ են սկզբնաղբյուրում հինարևելյան սեպագիր աղբյուրներում, որոնց ուսումնասիրությունը, ինչպես նաև Հնագիտական աշխատանքների արդյունքում ձեռք բերված նյութերը թույլ են տվել վերհասնել տարածաշրջանին և ժամանակաշրջանին բնորոշ տնտեսության հիմնական ճյուղերի բնույթն ու էությունը¹:

Հոգստանում արձարծել ենք երկրագործությանն ու արհեստական ոռոգմանը վերաբերող խնդիրներ՝ հիմնականում անդրադառնալով սեպագիր աղբյուրներում դրանք արտահայտող տերմինների մեկնաբանություններին:

1. Երկրագործություն

Ինչպես միջագետքյան, այնպես էլ ուրարտական գարնությունը տարբերակել է երկրագործության մեջ կիրառվող, մշակովի հողատարածքները անմշակից: Ուրարտական տեքստերում (մշակովի) դաշտ իմաստով գործածվել է դեռևս մ.թ.ա. III հազարամյակից հայտնի GAN(A) գաղափարադիրը², որի վանկագիր տարբերակի դոյությունը (ուրարտ. amudi) բացահայտվել է վերջերս³: Անմշակ հողատարածքներն արտահայտվել են qıurani (KI)^(TIM /MES) quldini(e) manu «հողն անմշակ⁽⁷⁾ է (եղել)⁴» կաղապարային բանաձևով և դուգահեռ տարբերակներով⁵: Ի տարբերություն ուրարտական աղբյուրների, որոնցից հայտնի է մերձուրմյան ավազանի երկրագործ-

1 Տարածաշրջանի տնտեսության մասին տե՛ս Н. В. А р у т ю н я н. Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1964, с. 63-67; 110-113; Ch. A. B u r n e y. The Economic Basis of Settled Communities in North-Western Iran.– In.: “Mountains and Lowlands: Essays in the Archaeology of Greater Mesopotamia”, ed. L. D. Levine, T. C. Young.– “Bibliotheca Mesopotamica”, vol. 7, Malibu, 1977, pp. 1-7. Համեմատության համար տե՛ս X. de P l a n h o l. Azerbaidjan, Human and Economic Geography.– In.: “Encyclopaedia Iranica”, vol. III, 1989, pp. 210-213.

2 Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (далее – КУКН). Ереван, 2001, с. 416.

3 Н. В. А р у т ю н я н. КУКН, с. 434.

4 Հմմտ. Հայ. կորդ բառը՝ անմշակ, խոպան (հող) իմաստով (Г. Б. Д ж а у к я н. Урартские заимствования в армянском языке.– “Культурное наследие Востока”, Л., 1985, с. 367):

5 Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 350; Н. В. А р у т ю н я н. КУКН, с. 465, 462, 460. Զուգահեռ տարբերակներում արտահայտությունը Հանդես է գալիս qıurani (KI)^(TIM /MES) suli/e/ (şiraba/e/) manu (թերևս նաև՝^{NA4} qar-bi salzi manu) բանաձևերով, որոնք արտահայտել են նմանատիպ իմաստ: Մոտավոր կերպով թարգմանվում է հողն ամայի⁽⁷⁾, (անմշակ⁽⁷⁾, ողորկ⁽⁷⁾) է (եղել) արտահայտություն:

ծովածխան մասին որևէ տվյալ, միջագետքյան տեքստերը տալիս են ընդհանրապես վերաբերող հարուստ նյութ, այդ թվում՝ երկրագործական տերմինների մեծ բազմազանություն: Տարածական բովանդակություն ունեցող հինգ տերմիններ են հայտնի շրջանի երկրագործության մասին սեղեկություններն պահպանած մեր միակ աղբյուրից՝ ասորեստանյան արքա Սարգոն II-ի (մ.թ.ա. 721 – 705թ.թ.) «ութերորդ տարվա արշավանքը» նկարագրող «Լուվրի աղյուսակ»-ից⁶: Այդ տերմիններն են՝ nagū-ն, a.sā-ն, a.gā-ը, tamertu-ն և qarbatu-ն:

Միջագետքյան սեպագրությունից լայնորեն հայտնի nagū-ն թարգմանվում է շրջան, մարզ, նահանգ իմաստներով՝ որպես տարածական կամ վարչական միավոր⁷: ԼԱ-ում կիրառված տերմինները ևս, առանց բացառությունների, թարգմանվել են ըստ այգամ (province, district, Bezirk, область)⁸: Գիտական շրջանակներում վերջինիս միանշանակ ընկալումը դադարեց 1980-ականների կեսերից, երբ, հիմքում ունենալով նույն աղբյուրը, շրջանառություն մեջ դրվեցին նոր իմաստներ՝ (ա) nagū - (բերրի) հովիտ, հարթավայր, (բ) nagū - պետություն (տվյալ դեպքում՝ Ուրարտուի – Ե. Գ.) ջրաբերուկային (ալլյուվիալ) հովերն ընդգրկող երկրագործական և բնակչության կենտրոնացման գլխավոր շրջան⁹: Ասվածի մեջ հնարավոր է տեսնել nagū-ի և երկրագործության անքակտելի կապ՝ ենթադրելով սեպագիր աղբյուրներում դրա կիրառությունը «երկրագործական շրջան» ընդհանրական նշանակությամբ:

Nagū-ն, սկսած հինբաբելոնյան ժամանակաշրջանից, հանդիպում է երկրագործական որոշ տերմիններին ղուգահեճ՝ կիրառվելով, թերևս, իմաստակից նշանակությամբ: Այդ տերմինները (ebirtum, tawirtum) հանդես են գալիս դաշտերի նկարագրություններ պարունակող կոնտեքստներում, ուստի nagū-ի բովանդակության մասին կարելի է դատել նաև վերջիններիս համար առաջարկված մեկնաբանություններից:

Ըստ այդմ, ebirtum նշանակել է գետին (ջրանցքին) ամամերձ հողատարածք (բառացի՝ գետափ, գետի հանդիպակաց փ, ինչպես նաև՝ անգրեփ-

6 F. Thureau-Dangin. Une relation de la huitième campagne de Sargon – “Textes cunéiformes du Louvre (TCL)”. Vol. 3, Paris 1912; D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia (ARAB). Vol. II, 1927, Chicago, № 139-178; И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (далее – АВИИУ). – “Вестник древней истории” (далее – ВДИ), 1951, № 2, текст 49; W. Mayer. Sargons Feldzug gegen Urartu-714 v. Chr.: Eine militärhistorische Würdigung, “Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft” (MDOG), 112, 1980 (S. 13–33) und 115, 1983 (Text und Übersetzung, S. 65–132). Գիտական տառադարձումները տրված են ըստ W. Mayer-ի նշյալ աշխատության:

7 W. von Soden. Akkadisches Handwörterbuch, I. Wiesbaden, 1967, S. 712a.

8 Այստեղ և այսուհետ որպես օրինակ բերվում են գիտական շրջանակների կողմից չայնորեն կիրառվող «Լուվրի աղյուսակ»-ի (այսուհետև՝ ԼԱ) չորս հրատարակությունների համապատասխան թարգմանությունները:

9 P. Zimansky. Ecology and Empire: The Structure of the Urartian State. – “Studies in Ancient Oriental Civilization”, 1985, N 41, p. 93-94; Ն ու յ ն ի Urartian Geography and Sargon's Eighth Campaign. – “Journal of Near Eastern Studies” (JNES), vol. 49, 1990, N 1, p. 10-12.

րատ (ոչ Միջադեպ) և այլն)¹⁰: Հայտնի են նման իմաստով տերմինի կիրառման բազմաթիվ դեպքեր, այդ թվում նաև nagu-ի հետ¹¹: Առավել կարևոր է երկրորդի մեկնությունը: Տերմինների այս շրջանակին անդրադարձած Մ. Սթոլի դիտարկումների համաձայն, tawirtum նշանակել է մաքրված, եղեղներից և այլ մացառուտներից մաքրված հող¹²: Նման իմաստ կարելի է տեսնել «մշակովի հողատարածք» արտահայտող ցանկացած տերմինում, ինչը չի բացառում իմաստի վերադրումը նաև nagu-ին որպես, ընդհանուր առմամբ, երկրագործական տարածքի¹³:

Ուրարտական տարածքներում գտնվող Սանգիրուտու երկրի Բարի մարզի մասին Սարգոն II-ը նշում է (ԼԱ, տող 192–193). UN.MES a-si-bu-tu na-gi-i su-a-tu ep-set be-lu-ti-ia sa i-na URU.MEŠ-ni li-me-ti-su-nu e-tep-pu-su e-mu-ru-ma ir-su-ú gi-lit-tu URU.MES-ni-su-nu ú-mas-se-ru-ma i-na na-ba-li a-sar šu-ma-mi mad-ba-re-es in-nab-tu-ma nap-sa-ta i-se-e'-ú «Մարդիկ, որոնք ապրում էին այդ nagu-ում, տեսնելով իմ մեծություն կատարած դործը, որն իրականացրի շրջակա դուրեբում, դսղացին, լքեցին իրենց բնակավայրերը, փսփսան անապատային տարածք՝ ծարավի վայր, և կյանք որոնեցին»:

Հատվածից ակնհայտ է դառնում nagu-ի կապը ինչպես «շրջակա բնակավայրերի», այնպես էլ երկրագործության համար նպաստավոր տարածքի հետ՝ ի հակադրություն «անապատային տարածքի՝ ծարավի վայրի»: Ըստ էության տերմինը կիրառվել է երկրագործական շրջան իմաստով՝ արտահայտելով վարելահողերի և «շրջակա բնակավայրերի» ամբողջությունը: Այս միտքն առավել պարզ է դառնում արձանագրության հետևյալ հատվածից (ԼԱ, տող 247). UN.MES^{kur} Sa-an-gi-bu-te na-gi-i a-s[i-bu-ut na-gi-i ù] a-si-bu-ut URU.MES-ni su-a-tu-nu gi-mer-tu «Սանգիրուտու մարզի մարդիկ, որոնք բնակեցրել էին nagu-ն և] բնակեցրել այս բոլոր քաղաքները...»: Հայտնի է, որ nagu-ն, որպես վարչամիավոր, աղբյուրներում վկայված է քաղաք(ներ)ի և «շրջակա բնակավայրերի» ամբողջության տեսքով¹⁴: Հատվածում տերմինը կիրառվել է վերջիններիս փոխարեն՝ արտահայտելով քաղաքի շուրջ սփռված երկրագործական տարածք (հուն. τὰ περιπόλια), քանի որ, սովորաբար, «շրջակա բնակավայրերը» գտնվել են գոյություն միջոց հանգիստացող աղբյուրների մոտ (վարելահողեր, ջրային ռեսուրսներ և այլն): Դրանց ինդիքը, ի թիվս այլոց, պետ. մատակարարման վարչական և ռազմական կենտրոնների տնտեսական ապահովումն էր: Տիպական են ուրարտական Թեյչեբահինի (Կարմիր բլուր) և Ռուսայի փոքր քաղաքի (Բաստամ) օրինակները: Ինչպես հայտնի է, գրանցում բնակվող քաղաքա-

10 Chicago Assyrian Dictionary (CAD), E, p. 8-10; J. J. F i n k e l s t e i n. Mesopotamia.– JNES. Vol. 21, 1961, №2, pp. 83–84.

11 M. S t o l. Old Babylonian Fields.– In.: “Irrigation and Cultivation in Mesopotamia”, eds. J.N. Postgate, M.A. Powell, Part I, Cambridge.– “Bulletin on Sumerian Agriculture” (BSA). Vol. IV, 1988, p. 176.

12 M. S t o l. Նշվ. աշխ., էջ 177–178:

13 Նման հնարավորություն ենք ենթադրում ԼԱ-ում տերմինի կիրառման 32 դեպքերից առնվազն չորսում (ԼԱ, տող 192, 215, 226, 247/2):

14 Ե. Գ Ր Ե Կ Յ Ա Ն. Մանայի թագավորության վարչաքաղաքական միավորների և դրանց տեղագրության շուրջ.– «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, 2000, էջ 157:

ցիական և զինվորական անձինք չեն զբաղվել տնտեսավարուժյամբ¹⁵: Վերջիններին գոյությունն ապահովել են «չրջակա բնակավայրերը» որպես ամբողջություն, այսինքն՝ nagu: Ըստ էության, տվյալ դեպքում գործ ունենք նաև տնտեսական միավորի հետ, եթե այս հասկացության մեջ ներառենք քաղաքները՝ որպես արհեստագործական կենտրոններ: Այս առումով հետաքրքիր են Ուրարտուի պետական-արքունական տնտեսություններին տրված անվանումները՝ ¹⁶Me-nu-a-i-ni-e hu-bi-i Մենուայի (Մենուայան) հովիտ, ¹⁷Ru-sa-i-ni-e hu-bi-gi Ռուսայի (Ռուսայան) հովիտ և այլն¹⁶, այսինքն՝ հովիտ (=nagu^(?)) բառի տակ ընկալվել է պետական-արքայական տնտեսություն կամ տնտեսական միավոր¹⁸՝ երկրագործական շրջանների (որոնք ընդգրկել են մշակադաշտեր /amudi - GAN^(GIS)SAM^(AM)SE)/, խաղողի և պտղատու ալիքներ /^(GIS)uldi/uduli - ^(GIS)GESTIN (şari, haluli), ^(GIS)şari(e) - ^(GIS)NU.SAR^(?)/, ինչպես և ջրանցքներ /pili - PAŞ/, դրանց տարածքում գտնվող «քաղաքները» (URU)¹⁹ և ռազմավարչական կենտրոնների (URU - E.GAL) ուղի հանրության տեսքով:

Այսպիսով, կարելի է հանգել եզրակացության, որ նորասորեստանյան ժամանակաշրջանում nagu բառը կիրառվել է առնվազն հինգ նշանակությամբ.

- ա. մարզային կառավարիչների (^{LU}EN.NAM, ^{LU}NAM) կողմից կառավարվող վարչական միավոր, մարզ, կենտրոն(ներ)ի և «չրջակա բնակավայրերի» վարչատարածական ամբողջություն,
- բ. բնական արգելքներով (լեռ, գետ և այլն) սահմանափակված աշխարհագրական ատարածք (հովիտ կամ դաշտավայր),
- գ. պետության կենսական տարածք՝ տնտեսական, ռազմական միջոցների և բնակչության մեծ կենտրոնացմամբ,
- դ. երկրագործական շրջան, վարելահողերն ու գյուղատնտեսականավայրերն ընդգրկող ամբողջություն,
- ե. պետական տնտեսություն (^(?)), երկրագործական տնտեսության և քաղաք(ներ)ի (ուր կենտրոնացված էին պետական արհեստանոցներն ու պահեստարանները) ընդհանրություն¹⁹:

15 Б. Б. П и о т р о в с к и й. Кармир-блур, II, Ереван, 1952, с. 10; Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 344-345.

16 Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи (далее — УКН), М., 1960, № 59, стк. 5-6; № 281, стк. 16-17; Н. В. А р у т ю н я н. КУКН, № 76, стк. 5-6; № 421, стк. 16-17, *ինչպես նաև* УКН, № 276, обор. стор., стк. 24-25, КУКН, № 406, обор. стор., стк. 24-25.

17 Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 342-343.

18 Քաղաք (=URU) ասելով ուրարտական դպրությունը հասկացել է գյուղատնտեսական, ամբողջություններ չունեցող և սովորաբար կենտրոն-ամբողջ շուրջ սփռված բնակավայրեր, որոնք նույնանուն են ասորեստանյան աղբյուրների շրջակա բնակավայրերին (Г. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 334-339):

19 Գ. Հովհաննիսյանը տնտեսական նման միավորներ է տեսնում ուրարտ. asuni բառի բովանդակությունում (К. Л. О г а н е с я н. Вопросы градостроительства Урарту. — «Պատմա-բանասիրական հանգես» (այսուհետև՝ ՊՀ), 1983, № 4, էջ 138-148): Հմմտ., սակայն, КУКН, № 56-ը, ուր տերմինը պարզապես փոխարինում է ¹⁹ebani (=KUR-ni)՝ երկիր բառին: Մասնագիտական գրականության կողմից առաջարկված թարգմանությունն է մարզ-ը (КУКН, с. 436):

Միջագետքյան սեպագիր դպրություններում A.ŠA շումերոգրամը կիրառվել է ինչպես առանձին, այնպես էլ մշակովի կամ անմշակ հողատարածք արտահայտող բաղաձայնի տերմինների հետ: Այն նշանակել է դաշտ²⁰, որին իմաստակից աքթադական (բարելոնյան) GAN(A) դադափարազիրը կիրառվել է ուրարտական դպրությունում վարելահաշտ, արտ իմաստով: Մեր աղբյուրում a.sa-ն հանդիպում է միայն մեկ անգամ (LԱ, 209)՝ նախորդելով երկրագործական հիմնական տերմիններից մեկին՝ a.gar-ին:

Միջագետքյան տեքստերում լայնորեն կիրառվող երկրագործական տերմիններից է a.gar-ը (u.gār/ugāru)²¹: LԱ-ից հայտնի Ջարանդա և Սանդիրուտու մարդերի նկարագրություններում չորս անգամ²² հանդիպող տերմինին մասնագիտական դրականության մեջ տրվել են դաշտ, մարգագետին, հարթավայր, արտ, հուլային տարածություն, ինչպես նաև անապատային հող, անմշակ շրջան, խոպան թարգմանությունները (վերջին երեք իմաստներն ըստ (a.sa) a/u.gar-su arbu(ti) բառակապակցության): Միջագետքյան տեքստերը, սակայն, հուշում են a.gar-ի այլ և առավել ընդհանրական նշանակություններ, այն է՝ վարելահող կամ, ընդհանրապես, երկրագործության մեջ կիրառվող հողատարածք²³: Ելնելով տերմինի հիշյալ իմաստներից, ենթադրելի է դրանց համապատասխան գործածությունն նաև LԱ-ում: Կոնտեքստներում տերմինի կիրառումները ես ակնարկում են նրա արտահայտած իմաստի ոչ կոնկրետ, ընդհանրական նշանակություններ, ինչպես օրինակ.

ա. (LԱ, 187) «Նրանք պոկոտեցին խոտը՝ նրա (Ռուսայի – Ե.Գ.) հուլսը, ամայացրին մշակադաշտերը (ūsahribu A.GĀR-su)»:

բ. (LԱ, 229) «Նրա գեղեցիկ մշակադաշտերը (A.GĀR-su asmu), որոնք ունեին հակինթի տեսք...»:

Երկու դեպքում էլ նախընտրելի է թվում տերմինի թարգմանությունը նրա ընդհանրական (օր.՝ մշակադաշտ), քան կոնկրետ (օր.՝ արտ) իմաստներով:

Փոքր-ինչ այլ են մյուս երկու դեպքերը, որոնցում a.gar-ը կիրառվել է arbu բառի հետ: Վերջինիս նշանակությունն է ամայություն, ավերածություն, վրատակ, անմշակ (դաշտ) և այլն²⁴, որից էլ բառակապակցությանը տրվող թարգմանությունը՝ անասլատային, ամայի հող: Քանի որ a.gar-ը, մեզ հայտնի բոլոր դեպքերում վերջին հաշվով կիրառվել է «մշակության մեջ օգտագործվող հող» իմաստով, ապա ենթադրելի է, որ այն կապահասներ իր հիմնական նշանակությունը arbu-ի հետ համատեղ նշվելիս: Ուստի,

20 R. B o r g e r. Akkadische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1971, № 579.

21 Հիմնականում թարգմանվում է դաշտ, մարգագետին իմաստով (R. B o r g e r. Նշվ. աշխ.): J. N. P o s t g a t e. Neo-Assyrian Royal Grants and Decrees. Rome, 1969, № 32, p. 67.

22 LԱ, տող 187, 205, 209, 229:

23 W. v a n S o l d t. Irrigation in Kassite Babylonia – BSA, IV, p. 109–110. Հմտ. Հայերենի ազարակ բառը՝ վարելահող, մշակովի հողատարածք նշանակությամբ (L. Ա. Ե ա ո - յ ա ն. Հայերեն արմատական բառարան. Հ. I, Երևան, 1971, էջ 77, տե՛ս նաև Գ. Ե. Դ շ ա յ կ յ Ո. Նշվ. աշխ., էջ 366):

24 CAD, A, Part II, pp. 239–241.

Հագիվ թե ընդունելի լինի բառակապակցություն թարգմանությունը անապատային, ամայի հող նշանակությունը: Հետաքրքիր է a.gar-ի բովանդակությունն անդրադարձած հետադոտողներից Վ. վան Ջոլթի կարծիքը: Ըստ նրա, այս տերմինը կոչված է արտահայտել մշակելու նպատակով տվյալ տարածքի օգտագործման հնարավորությունը (a.gar - «պիտանի հողատարածք»)՝²⁵: Կարծում ենք՝ այս իմաստով է կիրառվել տերմինը ստորև բերվող երկու հատվածներում ևս.

ա. (ԼԱ, 205) A.GAR-sú ar-bu sa ul-tu u₄-um ul-lu-t[i.....]-du-ma GURUN ü GESTIN ki-ma zu-un-ni ú-sa-az-nin «Մշակելու համար պիտանի, (բայց) անմշակ դաշտերը, որոնք հնուց ի վեր [անջրդի էին²⁶]... նա ոռոգեց, և անձրևի նման թավեց նրանց վրա պտուղն ու խաղողը»:

Ըստ էության՝ a.gar - պիտանի հողատարածք ասելով պետք է հասկանալ նաև բերրի և հատուկ մելիորատիվ աշխատանք չպահանջող տարածքներ, ինչի վկայությունն է, կարծես, երկրորդ հատվածը.

բ. (ԼԱ, 209) A.SA U.GAR-sú ar-bu-ti sah-hi-is ú-se-mi [.....] ma-di-is pa-an sat-t[i] sam-mu ù ri-i-tu la ip-pa-rak-ku-ú ku-šu har-pu «Պիտանի, (բայց) անմշակ դաշտերը նա վերածեց մարդադետնի: Տարվա սկզբին կանաչեցին դրանք չափազանց բուռն. խոտն ու արոտը չէին դադարում ոչ ձմռանը, ոչ ամռանը»:

Միջագետքյան դպրություններում ոռոգովի երկրագործության հետ կապված հիմնական և առավել հաճախ կիրառվող տերմիններից է tamertu-ն (=GARIN), որի արտահայտած իմաստներից է ոռոգվող շրջան/դաշտ կամ, ընդհանուր առմամբ, արհեստական ոռոգման վրա հիմնված երկրագործական տարածք նշանակությունը²⁶: ԼԱ-ում tamertu-ն կիրառվել է ծանգամ, տարբեր կոնտեքստներում²⁷: Վերջին հանգամանքը սովորաբար պայմանավորում է տերմինի արտահայտած իմաստի բացահայտումը (տվյալ դեպքում՝ որոշակիացումը)՝ չենթադրելով նրա միանշանակ ընկալում: Նման մոտեցում, սակայն, չի նկատվում արձանագրության՝ դիտական շրջանառություն մեջ գտնվող հիմնական տարբերակներում, բացառությամբ՝ Վ. Մայերի կողմից առաջարկվածի: Ըստ նրա՝ tamertu-ն ԼԱ-ում կիրառվել է առնվազն չորս նշանակություն՝ շրջակայք (Umgebung, ԼԱ, 16, 206), շրջակա հողեր (Umland, ԼԱ, 169), հարթավայր (Ebene, ԼԱ, 189, 243) և դաշտ/մարդադետնի (Flur, ԼԱ, 229, 266, 275): Սակայն շրջանառվող թարգմանությունների և ոչ մի տարբերակում տեղ չի գտել տերմինի հիմ-

25 W. v a n S o l d t. BSA, IV, p. 109. Հատկանշական է, որ հույ. αγρός տերմինին համարժեք γεωργιον-ից ծագող γεωργησιμος-ը ևս ունեցել է «մշակելու համար պիտանի», իսկ γεωργησιμον-ը՝ «մշակելու համար պիտանի հող» իմաստները (Древнегреческо-русский словарь, I, М., 1958, с. 321):

26 W. v a n S o l d t. BSA, IV, pp. 107–110. Ֆ. Թյուրո-Դանթենը տերմինին վերագրել է շրջան/տարածություն (region, territoire) իմաստը (TCL, S. 28-29ff.), Դ. Լյուքենբերլի կողմից այն թարգմանվել է (շրջապատող) հարթավայր (plain) նշանակությամբ (ARAB, II, №158f.), իսկ Ի. Դյակոնովի մոտ տերմինն արտահայտվել է բացառապես շրջակայք (окрестность) իմաստով (АВИИУ 49 (167), с. 326 сл.):

27 ԼԱ, տող 16, 169, 189, 206, 229, 243, 266, 275:

նական՝ ուռգավող հողաաարածք (Ջրովիլ դաշտ(եր)) նշանակությունը, ինչն ակնկալելի էր նրա գործածման ութ դեպքերից առնվազն երեքում: Խոսքը վերաբերում է Սանգիրուտու երկրի նկարագրության ժամանակ տերմինի կիրառումներին:

Այս երկիրը, ԼԱ-ի համաձայն, հանգիսացել է ուրարտական պետությունների դյուղատնտեսական հիմնական շրջաններից մեկը՝ արհեստական ոռոգման լայն կիրառմամբ²⁹: Արձանագրության համապատասխան հատվածում առկա է Ջրանցքների կառուցման շնորհիվ նոր հողերի յուրացման նկարագրություն: Ոռոգման համակարգի և վարելահատերի նկարագրված պակեիրը էջը կարող չպայմանավորել նույն կոնսեքստում հանգես եկող tamertu տերմինի արաահայտած իմաստը, բնականաբար, ենթադրելով նաև համապատասխան թարգմանություն: Այս տերմինը հաճախ է հանդիպում միջագետքյան տարբեր գայրություններ ներկայացնող և ժամանակաշրջաններ ընդգրկող տեքստերում՝ գործածվելով որպես աշխարհագրական տարածք՝ շրջակայք, շրջակա տարածություն²⁹, ինչպես նաև վարելահատ, մշակովի հողատարածք ընդհանրական իմաստներով: Վերջին պարագայում ուշագրություն է գրավում tamertu տերմինի յուրահատուկ կիրառությունը. հանդիպում է գլխավորապես այն կոնտեքստներում, որոնք պարունակում են նաև գետերի (օր.՝ ^{na}Purattu) կամ Ջրանցքների (օր.՝ ^{nar}NI-KUR) հիշատակումներ: Ընդհանուր առմամբ, դատելով այլ տեքստերից ևս, ակնհայտ է դառնում տերմինի իմաստը՝ բերովի ջրի կարիք ունեցող մշակովի հողատարածք³⁰: Ուստի՝ վստահորեն կարելի է այն թարգմանել նշված իմաստով նաև ԼԱ-ի համապատասխան տեքստերում:

ԼԱ, 243 տողում առկա «ID.MES ba-bi-lat A.MES mi-li i-na [.....] i-na ta-mer-ti-šu-nu la i-šu-ü ba-til-tu» հատվածը թարգմանվել է «Վարար ջրերը գետի [.....] տանող գետակները էջին ընդհատվում շրջակայքում» նախադասությամբ³¹: Այնինչ, արժե այն ընթերցել «Վարար ջրերը գետի [.....] տանող ջրանցքները էջին ընդհատվում ուռգավող դաշտերում» տարբերակով: Կարծում ենք, որ նման հնարավորություն է ենթադրվում նաև արձանագրության 189 և 206 տողերում հանդիպող tamertu բառի կիրառումներում:

(ԼԱ, 189) ^{su}Tar-ü-i ^{su}Tar-ma-ki-sa É-BAD.MES-ni dan-nu-ti sa i-na KUR Da-la-aije ta-mer-ti É SE.PAD.MES-sú ma-at-ti ep-su «Տարուին և Տարմակիսան՝ գալայցիների երկրի ուռգավող դաշտերում գտնվող ամուր, պարսպապատ քաղաքները, որտեղ նա ուներ գարու մեծ պաշարներ (այլ ընթերցմամբ՝ ... նրա մեծաքանակ գարու տան շրջակայքում³²)»³³:

28 Н. В. А р у т ю н я н. Земледелие и скотоводство Урарту, с. 28-31.

29 Ընդ որում շրջակայք կամ շրջակա տարածություն ասելով շատ հաճախ նկատի է առնվել աշխարհագրական որևէ միավորի շուրջ (մեծ գյուղ, առավելապես քաղաք) սփռված մշակովի տարածությունը: S t o l. Old Babylonian Fields.– BSA, vol. IV, 1988, pp. 178–179.

30 W. van S o l d t. BSA, IV, pp. 107–110; G. van D r i e l. Neo-Babylonian Agriculture – BSA, IV, 1988, pp. 142–143 (համապատասխան աղբյուրների հղումներով):

31 АВИИУ, 49 (233).

32 АВИИУ, 49 (188).

33 ARAB, II, 159.

(LՍ, 206) ⁸¹⁵dul-bu ⁸¹⁵su-rat-hu bal-ti É.GAL-LIM-[sú.....] ki-ma ⁸¹⁵TIR UGU ta-mer-ti-sú ta-ra-nu ú-sā-ās-si «Սոսիները՝ սլացիկ³⁴ ծառերը, նրա պալատի զարդը, [.....] ինչպես անտառ, տարածել տվեց ստվերը նրա (Ռուսայի – Ե. Գ.) ոռոգովի դաշտերի վրա»:

Ըստ այդմ, անհրաժեշտ ենք համարում նշված դեպքերում տերմինը կիրառել ոռոգովող դաշտ նշանակութայամբ, ընդ որում՝ խոսքը կարող է վերաբերել միմիայն պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի³⁴:

Ի լրումն ասվածի, կարծում ենք, tamertu տերմինի տակ կարելի է տեսնել մի երրորդ իմաստ ևս, այն է՝ վարելահողեր, այգիներ և պարտեզներ ընդգրկող տնտեսական համալիր՝ հիմնական և օժանդակ կառույցների առկայությամբ³⁵:

Տերմինի կիրառման մնացյալ դեպքերում (LՍ, տող 16, 169, 229, 266, 275³⁶) միանգամայն տեղին է շրջակայք, շրջակա տարածություն թարգմանությունը:

LՍ-ում «երկրագործական տարածք» արտահայտող և ստորև քննարկվելիք վերջին տերմինը qarbatu-ն է: Միջագետքյան տեքստերում այն հանդիպում է բազմիցս՝ արտահայտելով տարածական ընդգրկում (շրջան, շրջակայք, բաց տարածություն) կամ առնչվելով ոռոգման և երկրագործության հետ (ոռոգովող դաշտ, մարգաղետին, նաև՝ արոտավայր և այլն)³⁷: Մեր աղբյուրում ևս հանդիպող տերմինին մասնագիտական գրականություն կողմից տրվել է պտղատու այգի(ներ), արտ(եր), դաշտ(եր) թարգմանությունը: Բանի որ կոնտեքստում qarbatu-ին նախորդում է Եփրատի հետ համեմատվող մեծ ջրանցքից «անհամար քանակությամբ» երկրորդական նշանակության ջրուղիներ անցկացնելուն վերաբերող հատվածը (LՍ, տող 203–204) pal-gu ba-bíl A.MES su-du-ti ih-[ri-ma.....A.MES] HE.NUN ki-ma Pu-rat-ti ú-sar-di a-tap-pi la mi-i-na šur-ru-uš-sā ú-še-ša-a[m-ma.....] lu-ú ú-sam-ki-ra qar-ba-a-te), ապա պարզ է դառնում տվյալ

34 Մեր կողմից առանձնացված բոլոր բրեք դեպքերում tamertu-ին դուգահեռ հիշատակվում են մի քանի կառույցներ, որոնց պետական (արքայական) սեփականություն հանդիսանալը, շրջակա դաշտերով հանդերձ, հազիվ թե վիճարկվի: Դրանք են խոշոր շտեմարաններ ունեցող ամրոցները (LՍ, 189), պալատը (LՍ, տող 206) և պալատական համալիրը («մեծ պալատներ», LՍ, 243): Ընդ որում շեշտվում է արքաների կողմից դրանց կառուցման իրողությունը, ինչն ակնարկում է նաև պատկանելությունը:

35 Այս առումով բնորոշ է Հայերեն ագարակ բառի օրինակը: Այն, սկզբնապես նշանակելով միայն վարելահաշտ, այնուհետ վերածել է մասնատիրական հողատարածք/տնտեսություն արտահայտող բառի ագարակ-դաստակերտ-ի (Գ. Ն. Ս ա Ր Ղ ս յ ա ն. Դաստակերտները և ագարակները V դարի Հայկական աղբյուրներում. – ՊԻՀ, 1962, № 3, էջ 85 և ծանոթ. 18): Վերջինս ներառել է վարելահաշտեր, այգիներ, բնակելի և օժանդակ կառույցներ և այլն, ինչպիսիք առկա են նաև LՍ-ի համապատասխան կոնտեքստներում:

36 Տվյալ դեպքում ընդունելի է շրջակայք թարգմանությունը (տե՛ս ծանոթ. 29), եթե այն ընկալենք քաղաք(ներ)ի շուրջ սփռված մշակովի հողատարածք իմաստով (տեքստում ասվում է (LՍ, 275)). Բերքը իր ժողովրդի հույսը, և հարզը՝ իր անասունների կյանքը, ես այրեցի ինչպես թփուտ, ամայացրի շրջակայքը): Նման բովանդակությամբ tamertu-ում հնարավոր էր գրադրվել և երկրագործություն, և անասնապահությամբ: Միջագետքյան որոշ տեքստերում նշվում է tamertu-ի տարածքում անասունների հոտերի առկայության մասին: Տե՛ս W. van S o l d t. BSA, IV, p. 108.

37 CAD. Q, pp. 211-213. Աղբյուրներում հանդիպում է նաև qerbetu, qerbatu և այլ տարբերակներով:

պարագայում նրա արտահայտած իմաստը՝ ուղղվող դաշտեր: Նման թաղամասնություն ենթադրելի է նաև մեկ այլ արձանագրությունում հանդիպող qarbatu և tamertu տերմինների համատեղ օգտագործման վաստից. ugarī rabūti qarbatu u tamirati³⁸:

Հարց է ծագում՝ ինչու կոնտեքստում, որպես միակ բացառություն, «ուղղվող դաշտ» իմաստով կիրառվել է qarbatu-ն և ոչ թե tamertu-ն, ինչպես մնացյալ գեպքերում: Եթե tamertu տերմինով, ինչպես ենթադրում ենք, ԼԱ-ում արահայտվել է պետական-արքունական հողատարածքը, ապա չենք բացառում նաև «համայնական հողատարածք» նշանակող բառի գործածության հնարավորությունը այս նույն սյուրբում: Հայկական շղթայում, օրինակ, «մասնատիրական հողատարածք» նշանակող աղբյուր/դաստակերտ տերմինին հակադրվել է պիլլը՝ պլուղ (որպես այգսլիսին), դյուղական համայնք նշանակությունը³⁹: Գիւղ տերմինը իր բովանդակություն մեջ ներառում է նաև գյուղապատկան կամ համայնքապատկան հողատարածքներ: ԼԱ-ում այս իմաստով է կիրառվել, կարծում ենք, qarbatu-ն՝ արահայտելով ոչ միայն երկրագործական տվյալ տարածքի բնույթը (ուղղվող), ինչպես վերը նշվեց, այլև՝ պատկանելությունը (համայնական): Այս տեսակետի օգտին են վկայում հետևյալ փաստարկները: Նախ՝ ուղղություն է արժանի նորարարության դարաշրջանի միջադեպայան տեքստերից մեկը, ուր ասվում է. «...Բաբելոնցիների դաշտերը, որոնց սահմանագծերը մոռացվել էին, քանի որ նշացներն իրենց տեղում չէին դաշտերում (qarbatu), որոնց սահմանաքարերը տեղաշարժվել էին, քանի որ հաստատուն չէին ամրացված...»⁴⁰: Հատվածում հստակ նշվում է բաբելոնցիների կողմից մշակվող qarbatu-ի տարածքում նշացների և սահմանաքարերի առկայության և հողամասերի՝ դաշտերի սահմանների խախտման մասին: Այսինքն՝ խոսքը համայնքին (համայնականին) պատկանող կամ համայնքի կողմից օգտագործվող հողատարածքի մասին է՝ անկախ օգտագործման ձևից, այլապես, եթե գործ ունենայինք մի ամբողջություն կազմող պետական կամ տաճարային տնտեսություն հետ, անհասկանալի կլիներ նրանցում հողաբաժան միջոցների առկայությունը⁴¹: Այն հանդաման-

38 CAD, Q, p. 212.

39 Գ. Խ. Ս ա Ր Գ ս Յ ա ն. Նշվ. աշխ., էջ 81–82:

40 CAD, Q, p. 212.

41 Սահմանաքարերի եզակի հիշատակություն է պահպանվել ուրարտական արքա Սարգուրի III-ի հրամանագրում՝ ^{NA4}pu-lu-si-ni-[li?] «կոթողներ» ձևով (H. B. A p y t y o - n y a n. KYKH, № 428, с. 11): Ըստ էության, համայնական հողերի մասին է խոսքը հրամանագրի 4-րդ տողում, ուր ասվում է. KI^{11M MES UKU}Qu-du-na՝ Կուդունիլի (քաղաքի) հողերը: Տեքստի բովանդակությունը խոստում է Կուդունիլի քաղաքի տակ համայնք սեսնելու հնարավորության օգտին. արքան հրամայել է քաղաքին (համայնքին⁴²) պատկանող հողերը կամ դրանց մի մասը վերադարձնել ոմն Խուկա Կուտուսիլցուն (այսինքն՝ անհատ տնտեսավարողի), իսկ նոր սահմանների ամրագրման համար պատրաստել սահմանաքարեր (պատահական չէ տեքստի այս հատվածում ¹¹ZA.DIM.MA «քարտաշ» նշանակող գաղափարագրերի համախմբի առկայությունը: Նման ընթացման հնարավորությունը տե՛ս H. B. A p y t y o n y a n. KYKH, с. 361, прим. 8): Ուրարտուի սոցիալական հարաբերություններն արտացոլող այս դրվագը ուղղակի վկայում է հողատիրության համայնական և մասնավոր ձևերի գոյությունը մասին, ի լրումն պետական-արքունական և տաճարային հողատիրության (առավել մանրամասն տե՛ս Ն. Վ. Հ ա Ր Ը թ յ ու ն յ ա ն. Ուրարտուի սոցիալ-տնտեսական կարգը. — Հայ ժողովրդի պատմություն. Հ. I, Երևան, 1971, էջ 338–344), ինչպես նաև հիշեցնում Մովսես Խորենացու վկայությունը Արտաշես I-ի կողմից

քը, որ կոնտեքստում qarbatu-ն իրոք արտահայտել է «համայնական հողատարածք» իմաստը, հավաստվում է նաև alalu բառի կիրառումներով: ԼԱ-ի համապատասխան հատվածում հիշատակվում է 300 «իմեր» հողերի յուրացման և մարդկանց կողմից երդվող ուրախ «ալալունների» մասին: Alalu-ն մասնագիտական գրականության մեջ համարվել է բերքահավաքին նվիրված երգ, աշխատանքային երգ կամ կրկներգ⁴²: Հետաքրքիր է, որ միջագետքյան բազմաթիվ տեքստերում alalu-երգը և qarbatu-ն հանդես են գալիս համատեղ՝ գյուղատնտեսական կամ նման աշխատանքների նկարագրողություններ պարունակող կոնտեքստներում, ինչպես նաև երկրագործությունների աստվածություն՝ Նրնգիրսուի հետ. վերջինս համարվել է նրա «տերը»: Նույնն է նաև ԼԱ-ում: Այս օրինակներում մատնանշում է qarbatu-ի (վարելագատ) և alalu-ի (երկրագործական աշխատանքների հետ կապված երգ) միջև մի երրորդ օղակի միջոցով իրագործվող անքակտելի կապ: Այդ օղակը, հասկանալի է, հողագործն էր, որն արտահայտվել է աղբյուրում UN(MES) գաղափարագրով (ԼԱ, տող 207) ... ú i-na ger-bi-ti-su na-di-ti a-ra-[ah-he.....] GIM DINGIR a-la-la DUG.GA ú-sal-sa-a UN.MES-su: Վերջինս ունի մարդիկ, ժողովուրդ նշանակություն⁴³: Ակնհայտորեն, տվյալ պարագայում խոսքը վերաբերում է երկրագործ մարդկանց՝ համայնականներին: Այստեղ հարկ ենք համարում որոշ տեղ հատկացնելու նաև մասնագիտական գրականության մեջ սույն հատվածին տրվող թարգմանություններին:

Նախ, ամենևին հարկ չկա կոնտեքստում տեսնել ինչպես աստված (GIM DINGIR) արտահայտությունը վերագրված Ռուսային⁴⁴, քանի որ ԼԱ-ի, 207. տողում առկա DINGIR (d)՝ աստված գաղափարագիրը կիրառվել է որպես alala բառի որոշիչ. GIM “alala (ինչպես ալալ /երգը/): Նման օրինակներ հայտնի են այլ տեքստերից ևս, ինչպես օրինակ՝ lam “Ningirsu ina mati ilsu alala երկրագործության աստծուց (Նինգիրսուից) հետո Հնչեցրեց երկրում alala-երգը⁴⁵: Այնուհետ, նույն տողում հանդիպող qerbiti (qerbeti) տերմինը նույնացվել է qerbi-ին՝ թարգմանվելով անմշակ, ամայի, խոպան (հող) իմաստով⁴⁶: Արգյո՞ք այստեղ գործ չունենք qerbetu-ի հետ, որի նշանակությունը, կոնտեքստից դատելով, առավել տեղին է. (ԼԱ, 207) ոռոգովի դաշտերում Հնարավորություն տվեց մարդկանց երգելու ուրախ «ալալուններ»: Միջագետքյան մի այլ տեքստում, ուր առկա է տերմինի կիրառություն, ասվում է. ina qerbetija usessu alala «թշնամիներս անհետաց-

գյուղերի (համայնքների) և ագարակների (մասնավոր տնտեսությունների) հողատարածքները սահմանաքարերով ամրագրելու մասին (Մ ո վ ս է ս ի ն ո ռ ե ն ա ց ի. Պատմությունը Հայոց. Երևան, 1991, գիրք Բ, ԾՁ): Տեղին է հիշել նաև Պատմահոր մեկ այլ վկայություն՝ կապված Շամիրամի գործունեության հետ. «Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս Հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով Հաստատէր» (Խ ո ռ ե ն ա ց ի. գիրք Ա, ԺՁ):

42 АВИИУ 49, прим. 51; CAD, A, Part I, pp. 328-329.

43 R. В о г е т. Նշվ. աշխ., № 312 (165).

44 АВИИУ 49 (199).

45 CAD, A, Part I, p. 328.

46 АВИИУ, 49 (199); ARAB, II, 160; W. M a y e r. MDOG, 115, 1983, S. 88-89.

ըին alala-երգը իմ դաշտերից»⁴⁷: Այստեղ ևս, ակնհայտորեն, կիրառվել է qarbatu-ն՝ թարգմանվելով (մշակովի) դաշտ իմաստով:

Եվ վերջին փաստարկը: Ուշքաբեղնյան աստղաբաշխական տեքստերից մեկում alala-ի հետ առկա է երկրի մարդիկ արտահայտությունը: Մեղ հետաքրքրող հատվածում ասվում է հետևյալը. [...] GIS.APIN alala ina mati kalisa KUD-is sunqu ina nise [...] «...հերկող գութան alala-ն կդադարի ամենուրեք երկրում, [կլինի] սով մարդկանց շրջանում»⁴⁸: Ըստ մասնագիտական գրականության՝ երկրի մարդիկ արտահայտությունը նշանակել է (երկրագործ) բնակչություն՝ վերաբերելով նրա ստորին խավերին, որոնք ունեցել են հողաբաժիններ⁴⁹: Ուստի՝ ԼԱ-ում կիրառված UN (=nise) գաղափարագրի տակ հնարավոր է տեսնել երկրագործ մարդկանց՝ համայնականների, ինչը մեծապես կհաստատվի նաև սվյալ տարածքի կարգավիճակը՝ որպես համայնքին պատկանող սեփականություն կամ նրա կողմից օգտագործվող հողատարածք:

Այսպիսով՝ պարզվում են ԼԱ-ում qarbatu տերմինի արտահայտած իմաստները.

ա. վարելահողատ, ոռոգվող հողատարածք,

բ. համայնական սեփականություն, համայնքի կողմից օգտագործվող հողատարածք:

2. Ոռոգում

Սեպագիր աղբյուրները և հնագիտական նյութերը վկայում են ուրարտական պետությունում արհեստական ոռոգման վրա հիմնված երկրագործություն և նշանակալի տարածքներ ընդգրկող ոռոգման համակարգի առկայություն մասին: Գրավոր տվյալների զգալի մասը վերաբերում է մերձ-ուրմյան ավազանի ուրարտական տիրույթներին, ինչը թույլ է տալիս, ի լրումն մնացյալի, ընդհանուր պատկերացում կազմելու նաև ողջ բնագավառի մասին⁵⁰: Ուրարտական վիճագրությունից հայտնի է ջրանցքաշինության մասին տեղեկություններ պահպանած 28 արձանագրություն: Այս տեքստերը, արձանագրելով ջրանցքներ անցկացնելու մասին փաստը (pili/PA⁵ (MRS) agu), չեն նշում գրա հետ կապված որևէ այլ տվյալ՝ չտարբերակելով նաև ջրանցքների տիպեր: Ուրարտական դպրությունում, թվում է, ջրանցք կամ արհեստական ջրատար ուղի իմաստն է արտահայտել մեկ

47 CAD, A, Part I, p. 328.

48 CAD, A, Part I, p. 328.

49 И. М. Дьяконов. Развитие земельных отношений в Ассирии. Л., 1949, с. 112; И. А м у с и н. Народ земли (К вопросу о свободных земледельцах дреней Передней Азии). — ВДИ, 1955, № 2, с. 14—36.

50 Առկա է ինդրին վերաբերող նշանակալի գրականություն: Sævi J. L a e s s ø e. The Irrigation System at Ulhu.— “Journal of Cuneiform Studies”. Vol. 5, 1951, pp. 21—32. Գր. Շ ի Ր մ ա զ ա ն. Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից. Երևան, 1962, էջ 5-61, Н. В. А р у т ю н я н. Земледелие и скотоводство Урарту, с. 11—52; B. Ö ğ ü n. Van'da Urartu sulama tesisleri ve Şamram (Semiramis) Kanalı. Ankara, 1970; C h. B u r n e y. Urartian Irrigation Works.— “Anatolian Studies”. Vol. 22, 1978, pp. 179-186; M. S a l v i n i. Il canale di Semiramide, “Geographia Antiqua”, 1/1992, S. 67—80; O. B e l l i. Doğu Anadolu'da Urartu sulama kanalları. İstanbul, 1997; նույնի՝ 1996 yilmda Dogu Anadolu bolgesi'nde Urartu baraj ve sulama sisteminin araştırılması, XV Araştırma sonuçları toplantısı, II. Cilt, Ankara, 1998, s. 163—198.

Հիմնական տերմին՝ վանկազիր քիլի-ն և նրա գաղափարագիր տարբերակը՝ PA5-ը: Հանդիպում են երեք այլ տերմիններ ևս, որոնք բովանդակալուծ-յամբ, գուցե, մաս են կազմել ոռոգման համակարգին⁵¹:

Ասորեստանյան և ընդհանրապես միջագետքյան սեպագիր աղբյուրները հարուստ են արհեստական ոռոգմանը վերաբերող նյութերով: Այդ իսկ պատճառով մերձուրմյան ավազանի հետ կապված ուրարտական աղբյուրների բացը⁵² հնարավոր է փոխհատուցել գրանցում և մասնավորապես ԼԱ-ում պահպանված տեղեկատվությամբ: Ի լրումն ընդհանուր նկարագրության՝ արձանագրության համապատասխան հատվածներում հանդիպում են նաև Ուրարտուի ոռոգման համակարգին վերաբերող միջագետքյան մի քանի տերմիններ, որոնց արտահայտած իմաստները, ըստ ամենայնի, պետք է որ արտացոլեն իրականությունը: Այս պարագայում, ինքնըստինքյան կարևորվում է ԼԱ-ում կիրառված ջրատեխնիկական տերմինների բովանդակության հստակեցումը այլ աղբյուրների հիման վրա:

Ուրարտուի ոռոգման համակարգին վերաբերող այդ տերմինները յոթն են՝ ID, palgu, atappu, hiritu, halilu, hirişu, AB.SIN:

Առաջին՝ ID (=naru) գաղափարագիրը կիրառվել է և՛ միջագետքյան, և՛ ուրարտական գաղափարներում: Նրա արտահայտած իմաստները երկուսն են՝ գետ և ջրանցք, ընդ որում՝ երկրորդ նշանակությամբ կիրառվելիս արտահայտել է բացառապես «գլխավոր, մայր ջրանցք» իմաստը⁵³: Այս

51 Դրանք են՝ ուրարտական վիմագրությունում կիրառման եզակի օրինակով հայտնի iši(naue) բառը (H. B. A p u t y o n y a n. КУКН, с. 450) և գետ(°) թարգմանվող ⁵¹munā-ն (КУКН, с. 455. Երրորդի մասին տե՛ս ծանոթ. 53): Առաջինը հանդիպում է Ռուսայի (I կամ II) կազմած Քելիչ-գյուլի արձանագրությունում, որի 2-3-րդ տողերում ասվում է հետևյալը. A^{MEŠ} ištīn[i] [p]ila[ú]e e'a išinaue ջրեր այսպիսի ջրանցքների և առուների(°) (УКН, № 268, стк. 2-3, КУКН, № 391, стк. 2-3): Արդյո՞ք այն նշանակել է առու՝ ըստ Ի. Մ. Դյակոնովի թարգմանության (И. М. Дьяконов. Заметки по урартской эпиграфике. — "Эпиграфика Востока", 1951, IV, с. 112-115) և ոչ թե, ասենք, հողակտոր (Հմմտ. Հայերենի ածու բառին՝ մշակովի հողակտոր իմաստով): Ինչ վերաբերում է ⁵²munā գետ(°) բառին, ապա չի բացառվում նրանում տեսնել նաև (մայր) ջրանցք իմաստը: Զուգահեռ այլ նշանակություն տեսնելու հնարավորություն, համենայն դեպս, արտահայտվել է մասնագետների կողմից: Տե՛ս Գ. А. Меликишивили. Урартоведческие заметки. — ВДИ, 1951, № 3, с. 174-176; H. B. A p u t y o n y a n. Даиналатини. — "Известия" АН АрмССР, 1957, № 4, с. 100-101.

52 Մասնագետների կողմից կարծիք է հայտնվել, համաձայն որի Աղթամարի ուրարտական արձանագրության (УКН, № 62, КУКН, № 79) տվյալները Աիդու(նի) երկրի և Ուիլի(նի) քաղաքի տարածքում ջրանքաշինական աշխատանքներ կատարելու մասին վերաբերել են մերձուրմյան ավազանին, մասնավորապես՝ Ուրմիա լճին հարավ-արևմուտքից հարող Ուշնուի հովտին (տե՛ս, օրինակ, P. Z i m a n s k y. Ecology and Empire, pp. 66-67. Table 11 and Fig. 11; J. E. R e a d e. Iran in the Neo-Assyrian Period — "Neo-Assyrian Geography", ed. M. Liverani. Roma, 1995, p. 35, fig. 3 և այլք): Երջանավոր Հիմնական տեսակետի համաձայն, այդ տվյալները վերաբերել են արձանագրության հայտնաբերման վայրին Աղթամարին մոտ գտնվող, Վանա լճի հարավափնյա տարածքներին (Գ. А. Меликишивили. Урартоведческие заметки. — ВДИ, 1951, № 3, с. 176-179 և այլք): Անհրաժեշտ ենք համարում արտահայտել այս տեսակետները՝ հոգվածի շրջանակներին դուրս համարելով դրանց մանրամասն քննարկումը:

53 W. van S o l d t. BSA, IV, p. 111. Հարկ է նշել, որ ID գաղափարագիրը ուրարտական վիմագրությունների կողմից երբևէ չի դիտվել վերոհիշյալ (մայր) ջրանցք նշանակությամբ, որի հնարավորությունը չի կարելի բացառել: Ամենայն հավանականությամբ (մայր) ջրանցքի, այլ ոչ թե վետի մասին է խոսքը Արգիշտի II-ի Հաղիի արձանագրությունում, որի համապատասխան հատվածում ասվում է. ⁵³Ar-giš-ti-š[e] a-li A^{MEŠ} ID^{URU} A-li-al-a-i (?)...

իմաստով են կիրառվել ԼԱ-ի 211 և 243-րդ տողերում հանդիպող գաղափարագրերը:

Քիչ ավելի անորոշ են թվում մայր ջրանցքից սկիզբ առնող ջրատար ուղիների և դրանք իմաստավորող տերմինների բովանդակությունն ու աստիճանակարգը:

Ինչպես նշվել է մասնագիտական դրականության մեջ, ջրանցքներին վերաբերող շումերական և աքքադական տերմինները մոտ են միմյանց և՛ բովանդակությամբ, և՛ զբաղեցրած դիրքով⁵⁵: Աքքադական սեպագիր դպրությունը, միաժամանակ տարբերակել է «ջրանցք» նշանակող ավելի մեծ թվով տերմիններ, որոնց կարգավիճակը եղել է երկրորդական: Վերջիններիս շարքում են նաև մեզ հետաքրքրող տերմինները:

Խնդրին անդրադարձած հետազոտողներից Փ. Սթեյնքելլերը, իր կազմած համակարգում, դետից կամ գլխավոր ջրանցքից (ID, naru) տարված առաջնային և երկրորդական նշանակության ջրուղիների շարքին է դասում PA5-ը, atappu-ն, palgu-ն և pattu-ն, դրանց հաջորդականությունը, սակայն, համարելով անորոշ: Ըստ համակարգի՝ թմբերի վրայով տարված առու(ներ) իմաստն են արտահայտել PA4-ը և hiritu-ն, իսկ ab.sin-ը (absinnu) և ser'u-ն նշանակել են ոռոգող ակոս⁵⁵:

ԼԱ-ից հայտնի ոռոգման համակարգը ես, ընդհանուր առմամբ, համապատասխանում է վերը նշված պատկերին: Խնդիրը, սակայն, տվյալ պարադայում, վերաբերում է որոշ տերմինների արտահայտած, բայց նրանց վերագրված իմաստների տարբերակմանը:

ԼԱ-ում երկուական կիրառումներով հայտնի palgu-ի (=PA4/E.PAP/)⁵⁶ և atappu-ի (=PA5/E.PAP/.LAL)⁵⁷ նշանակությունը բավական հստակ է: Մի-

Արգիշտին ասում է: «Ալիալա (քաղաքի) գետի (ջրանցքի) ջրերը...» (KYKH, № 406, обод. стор., СТК. 19-20), նամանավանդ՝ չի բացառվել սույն հատվածի վերջնամասի վերականգնումը URU A-li-al-a MU (=tini) տարբերակով (H. B. A p y t ю н я н. KYKH, № 406, прим. 66), այն է՝ Ալիալա (քաղաքի) անունով, որի դեպքում, ենթադրում ենք, այն կվերաբերի ID-ին՝ ջրերը ջրանցքի՝ Ալիալա քաղաքի անունով (Ալիալա քաղաքի անունը կրող ջրանցքի ջրերը): Նման մեկնարանություն դեպքում գաղափարագրի գետ թարգմանությունը չի արդարացնի իրեն: Այս միտքը կրկնվում է նաև Ռուսայի կազմած Քեչիշ-գյուլի վերոհիշյալ արձանագրությունում, որում նշվում է Ռուսայի ջրի և Տուչպա քաղաքների ջրի կարիքները բավարարող մի ամբողջ համակարգի մասին՝ Ռուսայի արհեստական ծովի ("Rusai şue), թերևս նրանից սկիզբ առնող մայր ջրանցքի (ID /Alaini/) և առաջնային կարգի ջրանցքների մասին (PA5): Ըստ էության, Ալիալի անունը տվյալ դեպքում ես պատկանել է ջրանցքի, քանի որ արհեստական լճից սկիզբ առնող ջրուղին ես արհեստական է՝ «ջրանցք», որը, դուցեև, հիշեցրել է դետ (ի դեպ, այս օրինաչափությունը բնորոշ է հինարևելյան իրականությանը, օրինակ՝ Շումերին, ուր ցանկացած արհեստական ջրատար ուղի, որն ինչ-որ կերպ նմանվել է գետի, արտահայտվել է ID՝ գետ գաղափարագրով: Սարգոն II-ը, օրինակ, ուրարտական Ոլիսու քաղաքի ջրանցքը համեմատել է եփրատի հետ (ԼԱ, տող 203-204): Իսկ Պատմահայր Մովսես Խորենացին Շամիրամի առուն (Մենուայի ջրանցքը) պարզապես անվանել է «գետ» (ն ո ռ ե ն ա ց ր գ ր ք Ա, ժԶ): Մեծ ջրանցքները անվանակոչելու պրակտիկան լայնորեն կիրառվել է Հին Արևելքում, ներառյալ Ուրարտուն (ջրանցքներ Մենուա, Ումեշիների անուններով), և միջագետքյան այլ երկրներ, որտեղ խոշոր ջրանցքներն ունեին իրենց անունները (օր. ¹⁰¹Banitung, ¹⁰²NI-KUR և այլն):

54 P. Steinkeller. Notes on the irrigation system in Third Millennium Southern Babylonia.- BSA, IV, p. 74.

55 P. Steinkeller. BSA, IV, p. 74.

56 ԼԱ, տող 10, 203:

57 ԼԱ, տող 204, 222:

Ջրագերության տեքստերում առաջինը, որոշակի կարգավիճակ ունեցող ջրանցքից բացի, արտահայտել է նաև ընդհանրական իմաստ, այն է՝ «Ջրանցք» որպես այդպիսին: Երկրորդը՝ atappu-ն, կիրառվել է palgu-ին և համազոր՝ (մեծ) ջրանցք, և ստորագաս կարգավիճակներով՝ ջրանցքի ճյուղ, (փոքր) ջրանցք⁵⁸: ԼԱ-ի համապատասխան կոնտեքստները ևս հուշում են տերմինների նման բովանդակություն, այն է՝ առաջնային (palgu) և երկրորդական նշանակության ջրանցքներ (atappu):

Կարծում ենք, այլ նշանակություններ է կիրառվել ԼԱ-ում ընդամենը մի անգամ վկայված ⁽¹¹⁾hiritu տերմինը: Արձանագրության թարգմանություններում վերջինիս վերագրվել են առու, ջրանցք, խրամ իմաստները⁵⁹:

(ԼԱ, տող 221) ⁽¹²⁾hi-ri-tu ID tuk-la-te-su a-ru-ur-sa as-ker-ma A.MES du-[us-su]-ti a-na iu-sum-di u-ter «Ջրանցքը՝ հեղեղ, որը սնում էր նրան (Ռուսային – Ե. Գ.), – ես պատմեցիք ելքը և ա[ռու]ս ջուրը նրա վերածեցի ճահճուտի»:

Վերոհիշյալ իմաստները, առավել ևս Փ. Սթեյնքելների համակարգում ⁽¹³⁾hiritu-ին վերագրված առու նշանակությունը, ակնհայտորեն, չեն համապատասխանում տերմինի ID՝ հեղեղ, (ջրի) հոսանք բնորոշմանը: Վերջինս ենթադրում է ջրի առավել մեծ քանակություն՝ ստիպելով առաջինի մեջ որոնել այլ իմաստ:

Հայտնի է, որ hiritu-ն ծագում է heru (harú)՝ փորել, պելել, փորել-հանել բառից⁶⁰, որից սերում են he/irutu-ի հողային աշխատանքներ, ինչպես նաև ակոս, առու, ջրանցք նշանակությունները⁶¹: Օրինակ. 3 1/2 sigel kaspi a-na hi-ru-tu nani sa ina abul-li^d Adad ... «3 1/2 սիկլ արծաթ՝ ջրանցք փորելու համար, որը մոտ է Ադադի մեծ դարսլասին...»⁶² կամ A.SA hi-ir-re-tum harpatum A.SA hi-ir-re-tum uppulatum դաշտերը՝ վաղ ակոսներով (և) դաշտերը՝ ուշ ակոսներով⁶³:

Հեռավոր, դրանում կարելի է տեսնել նաև ընդհանուր՝ հողում փորված (ջրով լի) տարածություն իմաստը: Հատկանշական է, որ բարելոնյան մաթեմատիկական տեքստերից մեկում hiritu-ն նկարագրվում է որպես երկրաչափական հստակ տեսք ու չափ ունեցող կառույց (ութանկյուն՝ հիմքում՝ 42×42մ, վերին հատվածում՝ 60×60մ՝ 9մ տարբերությամբ): Բնականաբար, դժվար է 3600 մ² մակերես և մոտ 22800 մ³ ծավալ ունեցող նման կառույցը համարել «Ջրանցք», ինչպիսի հետևություն, այս պատկերից ելնելով, հանգել է նաև Մ. Փոուելը⁶⁴:

58 CAD A. Part II. pp. 483-485.

59 CAD H, pp. 198-199; A. P o e b e l. Eine sumerische Inschrift Samsuilunas über die Erbauung der Festung Dur-Samsuiluna – “Archiv für Orientforschung” (AfO). Bd. 9, 1933-1934, S. 282-283.

60 CAD H, p. 175-176.

61 CAD H, p. 176.

62 R. P h. D o u g h e r t y. Archives from Erech. Time of Nebuchadrezzar and Nabonidus. New Haven, 1922, p. 29 (№268, ln. 1-3).

63 CAD. H, pp. 198-199; H. W e i s s. Kish, Akkad and Agade.– “Journal of the American Oriental Society”. Vol. 95, No. 3, 1975, p. 447.

64 M. P o w e l l. Evidence for Agriculture and Waterworks in Babylonian Mathematical Texts.– BSA, IV, 1988, p. 163.

Արդյո՞ք այստեղ, պարզապես, գործ չունենք «Ջրով լցված տարածութ-
յան»՝ ջրամբարի հետ: Ընդ որում, խոտքը կարող է վերաբերել երկրորդա-
կան կարգի ջրավազանների, որոնք աղբյուրի գեր են կատարել տեղական
ցանցերի համար՝ իրենք սնվելով գլխավոր ջրանցքից կամ այլ աղբյուրնե-
րից: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն բարձր մակարագից, որին
հասել էին ուրարտացիները՝ ջրատեխնիկական նման կառույցներ ստեղծե-
լու ասպարեզում⁶⁵: Միանգամայն հնարավոր է, որ այս կարգի կառույց է
նկատի առնվել Արգիշտի II-ի կազմած Հաղիի և Չելեբի-բաղիի արձանագ-
րությունների *šue asuahina* արհեստական ծով (ջրամբար⁶⁶) արտահայտութ-
յան տակ⁶⁶, որը հանդես է դալիս բացառապես ջրանցքաչինական նկարագ-
րություն պարունակող կոնտեքստներում:

Մեկնաբանման կարիք ունեցող հաջորդ տերմինը արձանագրության
վնասված հատվածներից մեկում հանդիպող *halilu*-ն է: Պահպանված հատ-
վածը⁶⁷ Թ. Թյուրո-Դանթենը թարգմանել է «..... նրա ա-
նոթները ցուցադրեցի արևին»⁶⁸, Լ. Լյուքենբերգը՝ «...(ը)...ես...և նրա...(ը)
ես ցուցադրեցի արևին (արևի լույսին)» նախադասությամբ⁶⁹:

Ի. Դյակոնովի մոտ վերականգնված հատվածը հնչում է այսպես. «Նրա
հունից անցկացված առունները ես [...], նրանց ստորգետնյա խողովակնե-
րը⁷⁰ ցույց տվեցի արևին»⁷⁰:

Աքքադերենի բառարանում, ելնելով ԼԱ-ի այս նույն հատվածից, տեր-
մինին տրվել է ինչ-որ կարգի ջրանցք կամ առու իմաստը (առաջին նշանա-
կությունը՝ պիտանի (օգտագործելի) ջուր)⁷¹, իսկ մեկ այլ բառի բացատ-
րությունում թարգմանվել է որպես ջրատար խողովակ⁷²:

Վերոհիշյալից ելնելով կարելի է հանգել հետևյալին՝ կառույցը հանդի-
սացել է ջրատար ուղի, կազմել ոռոգման համակարգի բաղկացուցիչ մաս
և ունեցել ոչ երկրորդական նշանակություն, ինչի հավաստումը կարող է
լինել ԼԱ-ում նրա կիրառումը: *Halilu*-ի իմաստի առավել հստակեցումը
հնարավոր է պայմանավորել կոնտեքստում հանդես եկող մի քանի այլ
տերմիններից (*hiritu* - կարգավորիչ ջրամբար, *atappu* - փոքր ջրանցք, *silittu* -
ճյուղավորված), համակարգի ենթադրելի բաղադրամասերի ամբողջակա-
նության պահպանումից և միջազգային հնարավոր զուգահեռների առ-
կայությունից ելնելով: Կարևոր է նաև *halilu*-ի դիրքի ճշգրտումը *hiritu*-

65 Այս մասին տե՛ս O. B e l l i. Urartian dams and artificial lakes in Eastern Anatolia.–
“Anatolian Iron Ages 3” (eds. A. Çilingiroğlu, D. H. French). Ankara, 1994, pp. 9-30, Fig. 2.1;
և ն ա լ յ ի՝ Doğu Anadolu Bölgesi’nde Keşfedilen Urartu Barajlarına Toplu Bir Bakış.– “Bel-
leten”, 229, 1996, s. 638–751; և ն ա լ յ ի՝ 1996 yılında Doğu Anadolu bölgesi’nde Urartu baraj
ve sulama sisteminin araştırılması, s. 163-178, Harita 2, Çizim 1-17.

66 Н. В. А р у т ю н я н. КУКН, № 406, лиц. стор., стк. 45; № 407, лиц. стор.,
стк. 33, и с. 436.

67 «.....-šū is-qi-la-si-na ü-kal-lim dŠam(šū)-šū» (TCL, 222, S. 36).

68 TCL, 222, S. 37.

69 ARAB II, 161.

70 АВИИУ 49, (213). Վ. Մայերի մոտ տրված է նաև կոնտեքստի գիտական տառա-
գարձությունը. «(ԼԱ, տող 222) a-da-ap-pi ha-li-li si-lit-te šur-ri-šá ü-ha-ṭi-im-ma ša
[.....-s]u iš-qi-la-si-na ü-kal-lim dUTU-šū»:

71 CAD, H, p. 42.

72 CAD, S, p. 263.

atappu հատվածում: Արդյո՞ք այն ունեցել է հավասարազոր նշանակութ-
յուն կիրառվելով նույն բովանդակությամբ, այսինքն՝ որպես զուտ ջրա-
տար ուղի (atappu-ջրանցք և halilu-ջրանցք): Նման պատկեր է հետևում
CAD-ում տերմինին տրված բացատրությունից⁷³: Արձանագրության հրա-
տարակիչներից Ի.Մ. Դյակոնովը, սակայն, դրանց մեջ տեսել է տարբեր
գիրք և նշանակություն ունեցող կառույցներ:

Իրոք, hiritu-ն, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է կարգա-
վորիչ ջրահավաք ավազան: Համակարգի տեղային ցանցերի համար, ինչ-
պես վերը նշվեց, վերջինս կատարել է աղբյուրի դեր, որի ջրերը, ըստ ան-
հրաժեշտության, ուղղվել են որոշակի տեղամաս: Hiritu-ի կարգավորիչ
Ֆունկցիան ենթադրում է նրանից ճյուղավորվող այնպիսի ջրատար ուղի-
ների առկայություն, որոնք հնարավոր կլինեին փակել և բացել: Այսինքն՝
գործ ենք ունենալու hiritu-ն և atappu-ն միմյանց կապող օղակի՝ ջրթող
համակարգերի կամ ջրարգելակների հետ:

Այս վերջինը չափազանց մոտ է թվում միջագետքյան սեպագիր աղբ-
յուրներում հանդիպող hištu-րն. Բաբելոնյան տեքստերից մեկում այն
հանդես է գալիս 10×6մ տարածություն զբաղեցնող կառույցի տեսքով,
ընդ որում, արձանագրությունում հիշատակվում են բազմաթիվ histu-ներ
(թվով՝ 14)⁷⁴: Երկու այլ տեքստերի համաձայն՝ վերջիններս ունեցել են
«դռներ» KA, որոնք էլ պայմանավորել են կառույցի դերը որպես չորագե-
լակ ջրթող փականով⁷⁵:

Այս նույն դերն է կատարել, ինչպես ենթադրում ենք, halilu-ն: Վերջի-
նիս գիրքը hiritu-ի և atappu-ի միջև, hiritu-ի կարգավորիչ (ջրաբաշխ)
Ֆունկցիան և այլ նկատառումներ խոսում են նման հնարավորության օգ-
տին:

Halilu-ն, այսպիսով, հիշյալ երկուսի հետ կաղմել է ոռոգման համակար-
գի միջին օղակը, որը LU-ում հանդես է գալիս կարգավորիչ ջրահավաք ավ-
ազան – ջրթող համակարգ(եր) – երկրորդական (տեղային) նշանակութ-
յան ջրանցք(ներ) տեսքով:

Դաշտերի անմիջական ոռոգումն իրականացրել են համակարգի ստորին
օղակը կազմող ոռոգող ակոսները: Նման իմաստ են արտահայտել միջա-
գետքյան մի քանի տերմիններ, այդ թվում նաև LU-ում գաղափարագիր
AB.SIN տարբերակով հանդիպող absinnu-ն⁷⁶: Մասնադիտական դրակա-
նության համաձայն՝ գաղափարագրերի AB.SIN կոմբինացիան արտահայ-
տել է ինչպես ցանքս (ծիլ, սերմ), այնպես էլ ակոս (ակոսել) իմաստները⁷⁷:
Մեր աղբյուրում վերջինիս նշանակությունը պայմանավորել են կոնտեքս-
տում կիրառված երկու այլ տերմիններ imer-ը (=ANSU) և SE.NUMUN-ը,
որոնցից առաջինը, այլ իմաստներից զատ, հանդիսացել է տարածական և
սորուն (հոսուն) մարմինների չափի միավոր, իսկ երկրորդի նշանակութ-

73 CAD, H, p. 42.

74 W. van S o l d t. BSA, IV, p. 116.

75 Hištu-ի նշանակության ճշգրտումը որպես «ջրարգելակ» (չլուգ) պատկանում է Վ.
վան Ջուրթին: S t u W. van S o l d t. BSA, IV, p. 116–117.

76 CAD, A, Part I, p. 65; P. S t e i n k e l l e r. BSA, IV, p. 74.

77 R. B o r g e r. Նշվ. աշխ., № 128 (93):

յունն է սերմ, ցանքս (ծիլ, հերկ, նակ՝ ցորենի դաշտ, շրջան, հողամաս և այլն)⁷⁸: Իմաստների նման բազմազանությունն ու հատվածի վնասվածությունը թույլ են տվել մասնագետներին ունենալու տարբեր մոտեցումներ՝ ընդունելի դարձնելով շրջանառվող թարգմանությունների ցանկացած տարբերակ⁷⁹:

Ձեռնպահ մնալով հատվածի նոր մեկնաբանությունից՝ անհրաժեշտ ենք համարում առայժմ սահմանափակվել ԼԱ-ում նակ (ուտդող) ակոս իմաստն արտահայտող տերմինի կիրառության փաստն արձանագրելով:

Խնդրո առարկա տերմիններից վերջինը միջադեպի տեքստերից բավական հայտնի, ԼԱ-ում երկակի կիրառված *harišsu*-ն է (*hirišsu*)⁸⁰: Աքքագերենի բառարանում դրան տրվել են առու, խրամ իմաստները՝ ելնելով *harašu* բառի նշանակություններից, որոնց թվում «առու տանել», «խրամ փորել» և այլն⁸¹: ԼԱ-ի համապատասխան հատվածներում տերմինի առու (Ջրանցք) նշանակությամբ կիրառման հնարավորությունը չի արդարացնում իրեն: Կոնտեքստները հուշում են *harišsu*-ի պաշտպանական նշանակություն, և առաջարկված թարգմանությունները՝ խրամ(ատ), խանդակ (ավելի ճիշտ՝ բերդախանդակ) լիովին ընդունելի են. (ԼԱ, 190) BAD.MEŠ-ni-su-nu dun-nu-nu-ma sal-hu-su-nu kaš-ru hi-ri-iš-ša-ni-su-nu sup-pu-lu-ma sutas-hu-ru li-mi-is-su-un «նրանց (Տարուի և Տարմակիսա ամրոցների – Ե. Գ.) պարիսպներն ամրացված էին, սլատվարները՝ հաստատուն, խանդակները՝ խորունկ, և բուրբուռ էին շրջապարիսպը»:

Կարելի է միայն սլատկերացնել նշանակալի չափերի խանդակների, ինչը բխում է նակ մասնագիտական գրականությունում տերմինին վերադրված (մեծ) Ջրանցք իմաստից⁸²:

Այսպիսով, միջադեպի նյութի հետ համադրված ԼԱ-ի տվյալները ուրվագծում են Հին Արևելքին բնորոշ, Ուրարտուում գործած ուղղման համակարգի հետևյալ պատկերը: Համակարգի հիմքը կազմել են սնուցման աղբյուրից (գետ, լիճ և այլն) տարված մայր Ջրանցքները (ID, ^(ID) naru ~ ուրարտ. ID, ^(ID) muna): Վերջիններից սկիզբ են առել առաջնային նշանակության Ջրանցքներ (palgu, PA₅ = ուրարտ. pili, PA₅), որոնք ունեցել են նակ կարգավորիչ ջրամբարներ (^(ID) hiritu = ուրարտ. sue asuahina^(C))՝ ջրաբաշխ կառույցներով (halilu = histu^(C)): Համակարգը շարունակել են երկրորդական նշանակության Ջրանցքները (atappu), որոնցից ճյուղավորվել են դեպի առանձին տեղամասեր ձգվող ջրատար ուղիներ⁸³: Զրուղիների

78 CAD, I-J, p. 114-115; R. B o r g e r. Նշվ. աշխ., № 72 (45); M. P o w e l l. Late Babylonian Surface Mensuration.– AfO, Bd. XXXI, 1984, pp. 34-35.

79 Հմմտ. АВИИУ, 49 (199); ARAB, II, 160; CAD, I-J, p. 114; MDOG, 115, 1983, S. 89.

80 ԼԱ, տող 190, 242:

81 CAD, H, pp. 92-94, 198.

82 Ենթադրության հիմքում ընկած է Սիպպար քաղաքից ծագող արձանագրության այն տեղեկությունը, ըստ որի *hirišsu*-Ջրանցքը անց է կացվել անմիջականորեն եփրատից: S b ' u G. van D r i e l. BSA, IV, p. 142.

83 Համակարգի այս օղակի անվանումը, կարծում ենք, չի հիշատակվում աղբյուրում: Ստորին կարգի այս Ջրանցքները, իրենց բնույթով, պետք է մոտ լինեին այն ջրատար ուղիներին, որոնք միջադեպի դպրությունում հանդես են դալիս PA₄ գաղափարագրով:

չղթան եղրափակել են ոռոգող ակոսները (AB.SIN, absinnu), որոնց միջոցով իրականացվել է դաշտերի (tamertu, qarbatu) անմիջական ոռոգումը⁸⁴: Ինչ վերաբերում է *hiriṣu*-ին, ապա արձանագրությունում այն չի կիրառվել «ջրանցք» նշանակությամբ:

Երկրագործության մեջ կիրառվող ցանկացած հողատարածք, ինքնին հասկանալի է, կարիք ունի ոռոգման՝ լինի դա բնական կամ արհեստական ճանապարհով: Փաստական նյութի սղուծությունը, ցավոք, թույլ չի տալիս հստակորեն որոշել առաջինի կամ երկրորդի դերը ոռոգման բնագավառում: Արդյո՞ք մերձուրմյան ավազանում, ինչպես նաև ուրարտական սլետության այլ տարածքներում, արհեստական ոռոգումը կրել է կենսական բնույթ, առանց որի անհնար էր պատկերացնել երկրագործությունը: Դժվար է պատասխանել: Գիտական շրջանակները, համենայն դեպս, ենթադրել են ինչպես դրա կենսական անհրաժեշտությունը⁸⁵, այնպես էլ երկրորդական նշանակությունը՝ պայմանավորված կենտրոնական իշխանության քաղաքական նկատառումներով⁸⁶:

Համենայն դեպս, առկա է մեկ փաստ. խնդրո առարկա ժամանակաշրջանի սեպագիր աղբյուրները արձանագրել են բնական տեղումների աննախադեպ աճ⁸⁷, այդ թվում նաև մեղ հետաքրքրող տարածքներում⁸⁸:

Վերջինիս տակ, սովորաբար, նկատի է առնվել առու-ն: *Še'u P. Steinkeller*. BSA. IV, p. 73-74.

84 Հետաքրքիր է, որ Արագածոտնի Հնագույն ջրաբաշխ ցանցն ուսումնասիրած Գր. Շիրմագանը ևս հանդիպել է նմանատիպ պատկերի: Արագածոտնի Համակարգում, ըստ նրա, առկա են եղել և այդբյուրներից սնվող գլխավոր ջրանցքներ, և հատուկ ջրամբար-լճակներ (ի տարբերություն ցանցերի սկզբնամասում դստնվող ջրահավաք լճերի), և երկրորդական ջրաբաշխ ուղիներ: Այս Համակարգը չափազանց մոտ է ԼԱ-ում նկարագրվածին, ինչը կարող է վկայել կառուցողների և կառուցման տեխնիկայի ընդհանրություն: Հեղինակը, հետևելով Հնագետ Աշխարհբեկ Բայանթարին, այն վերագրում է նախաուրարտական դարաշրջանին (մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակներ): Գր. Շիրմագան, էջ 50–51, տ'ն նաև M. M. X a t p a n. О древней ирригационной сети Арагацотн. – «Բանբեր Երևանի Համալսարանի», 1976, №1, էջ 121–129:

85 Հայ ժողովրդի պատմություն. Հ. I, էջ 359, Գ. А. М е л и к ш в и л и. Наири-Урарту. с. 330.

86 P. Z i m a n s k y. Ecology and Empire, pp. 66-69; C h. B u r n e y. Urartian Irrigation Works, p. 180.

87 J. N e u m a n n, S. P a r p o l a. Climatic Change and the Eleventh-Tenth-Century Eclipse of Assyria and Babylonia, JNES, vol. 46, N. 3, 1987, pp. 181-182. Կլիմայական այս փոփոխությունը Հաջորդել է երեք դար տևած չորային շրջանին, որը Հայտնի էր աղետալի հետևանքներով խոշոր պետությունների վայրէջք (Ասորեստան, Եգիպտոս, Բաբելոնիա) կամ կործանում (Խեթական տերություն), ապաբնակեցում (Աքայան Հունաստան), մարդկանց զանգվածային տեղաշարժեր (Հանձինս «ձովի ժողովուրդների»), տնտեսական անկում և այլն: Այս խնդրի շուրջ առավել մանրամասն տե՛ս J. N e u m a n n, S. P a r p o l a. JNES, vol. 46, N. 3, 1987, p. 161-182; Ա. Ք ո ս յ ա ն. Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան, 1999, էջ 90-92, 116-117 (Համապատասխան գրականության հղումներով):

88 Ներկայումս բնական տեղումների քանակը մերձուրմյան ավազանում տատանվում է տարեկան 156մմ (Մոշիրան) – 405մմ սահմաններում (Ուրմիա): Տեղումների միջին տարեկան մակարդակը ավազանի մեծ մասում պակաս է 300 մմ (X. de P l a n h o l. Azerbaïdjan, Physical geography: Climate.– In.: “Encyclopaedia Iranica”. Vol. III, 1989, pp. 208-209): Բնական տեղումների նվազագույն քանակը, որը թույլ կտար զբաղվել երկրագործությամբ առանց արհեստական ոռոգմանը դիմելու, տարեկան 200 մմ է (J. N e u m a n n, S. P a r p o l a. JNES, vol. 46, 1987, N 3, p. 162):

Հարցի առաջին հասակեցումը Հարկ է թողնել սեպագիր նոր աղբյուրների և գիտություն հետազոտ նվաճումներին:

ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИЕ ТЕРРИТОРИИ И СИСТЕМА ОРОШЕНИЯ В
СЕВЕРНО-ЗАПАДНОМ ИРАНЕ СОГЛАСНО КЛИНОПИСНЫМ
ИСТОЧНИКАМ

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Р е з ю м е

В статье рассматриваются 12 терминов, которые встречаются в "Луврской табличке" ассирийского царя Саргона II. Пять из них (nagu, a.šà, a.gàr, tamertu, qarbatu) относятся к сельскохозяйственной терминологии, остальные семь (ID, palgu, atappu, hiritu, halilu, hirišu, AB.SIN) – к терминологии искусственного орошения. Параллельные исследования, проведенные с месопотамскими и урартскими клинописными текстами, а также с археологическими материалами, позволили автору выявить новые значения терминов: nagu – *земледельческий район, царское (государственное) хозяйство или хозяйственная единица*; tamertu – *орошаемая земля, царская (государственная) собственность, хозяйственный комплекс*; qarbatu – *орошаемая земля, общинная собственность или же используемая общиной земля*; ID – *магистральный канал*; hiritu – *водохранилище*; halilu – *водоспускаемая система* и т.д.

THE AGRICULTURAL TERRITORIES AND IRRIGATION SYSTEM IN NORTH-
WESTERN IRAN ACCORDING TO THE CUNEIFORM SOURCES

YERVAND GREKYAN

S u m m a r y

12 terms mentioned in the "Louvre Tablet" of the Assyrian King Sargon II are discussed in the article. Five of them refer to agricultural terminology (nagū, a.šà, a.gar, tamertu, qarbatu) and seven (ID, palgu, atappu, hiritu, halilu, hirišu, AB.SIN) – to that of artificial irrigation. The parallel studies of Mesopotamian and Urartian cuneiform texts, as well as the archaeological material, enabled the author to clarify new meanings of the terms. Correspondingly, nagu means agricultural region, royal (state) economy or economic unit; tamertu – irrigated land, royal (resp. state) property, economic complex; qarbatu – irrigated land, common property or a land used by community; ID – main canal; hiritu – reservoir; halilu – sluice etc.